

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 47

1899 ՓԵՏՐՈՒԱՐ 13

Ամեն տողի համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթատարի ծախքը տնօրէնութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բոլ ալ կ'ընդունուի 100 դրուէի տեղ 105 դրուէ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ.—Մատենախօսական.—Տոբթ Իւթիւնեանի «Առաջնորդ Առողջապահութեան»:

Ղ. ԲՈԼԱՏ.—Ճարտարարուեստական. Ներկարարութիւնը: Բուրդ:

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ.—Հաւաքածական. Հաւնոցը:

ՄԱՏԱԹ.—Բժշկական նօթեր. Հերաթախութիւն:

Ղ. ԲՈԼԱՏ.—Արհեստական. Նիւքլադօժում. Մեկնարան:

ՄԻՆԱՍ Կ.ՓՕՐԹՈՒԴԱԼԵԱՆ.—Հարցում մը թիւեհներու «գուրուտան»ի մասին:

Ղ. Բ. Գիտական ինդիւիդներ:

ԱՐԱՔԱ.—Խոհանոցի բաժինը:

Հանելուկ —Թղթակցութիւն, Ազդ. ԷԼՆ.

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԵՐԵԱՆ

Կ. Պալին, Պապ. Արի Ճատենի, Թիւ 44

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կէյվէ-Ագհիսար.—Գ. Տ. Գաբրիէլեան էֆ.—ստացած ենք քառու-բօսթաւնիդ։

Քէսապ.—(Գործակալ).—Մենք թերթերը կը ղրկենք Ձեր ցոյց տուած հասցէով.—Հաւելայ Մ. Ալիքսանեան էֆ. ի նամակ գրուեցաւ, բայց ցարդ պատասխան չենք ստացած. վերջի գրութիւննիդ կը հրատարակուի։

Սըվալ.—Մ. Պէյլէրեան էֆ.—նամակնիդ ստացած ենք, ի մօտայ կը պատասխանենք, չնորհակալութիւն։

Իզմիտ.—(Գործակալ).—Նոր բաժանորդները արձանագրած ենք. ղրկեցինք 37, 38, 45, 46 թիւերէն մէյմէկ օրինակ. ծներէկի հունտ Ձեզ ալ կը ղրկենք. Ձեր հարցումին կը պատասխանենք։

Իզմիտ.—Օ. Սրապ էֆ.—Արձանագրած ենք նաեւ Ձեզ, վայելչապարգումթեան բաժնին ժողովուրդի քաջալերութիւն կապասենք որ մեր ձեռնարկ իրագործուի։

Սիլիլի.—Գործակալ.—Նամակնիդ ստացանք. հարցումին պատասխանը պիտի տեսնէք այս թիւին մէջ խի. ուզածնիդ կը ղըրկուի։

ԼՈՒԾՈՒՄ ԹԻՒԻ 25 ՀԱՆՆԼՈՒԿԻ

Լ ի տ ր
Է Լ ա
Ո ս կ ի
Ն ա ն դ
Ա ն տ ա Լ ու ղ ի ա
Ր ի օ ե ա ն է յ ր օ
Տ ա վ ա Լ ա կ ի ր ի
Ը ն դ ա կ ա ղ ա մ ք
Վ ա ր դ
Ի ր ի ս
Ն ու ո
Չ ո ր ս
Ի ր ա ն

Պայմանը.—Եթէ սկզբնատառերը կարդաք, պահանջուածին համեմատ պիտի գտնէք պատկերահանի մը անունը, Լէ-ոնար տը Վինչի, հեղինակ «Ժօքօնտ»ի։

ՋԱՊԵԼ Յ. ԵՍԶԸՃԵԱՆ

Լուծած է նաեւ Պէրպէրեան վարժարանի աշակերտներէն Պ. Յակոբ Ս. Գալֆաեան։

ԳԱՂ. ՀԱՅ. ԴՈՐԾՆ. ԴԻՏՈՒԹԵԱՆՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ. Հ. ՍԵՄԵՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Սոյն բառգիրքը կը խօսի աշխարհիկ լեզուով եւ գործնական ոճով խոշորութեան, վերաբուծութեան. Առողջաբանութեան, Հարտարարութեան, Բնաբանութեան, Քիմիայի, գեղերու. Բնական պատմութեան, Աստղալախութեան, Երկրագործութեան և այլ գիտութեանց վրայ։

Ըստ կարելւոյն նմանայն խնամք տարուած է բառերու ճշգրտութեան, Վերաբուծութեան կուտայ իւրաքանչիւր նիւթի վրայ, իւրաց առեւտու մէջէն անգործածական նիւթերն. իսկ կարեւոր նիւթոց վրայ էջերով օգտակար տեղեկութիւնք տնայկա տն։ Այս աշխատութիւնը տարպէս զի յինքեան կարեւոր լլայ, հեղինակը իրեն առաջնորդ բռնած է շատ մը հանրագիտական եւրոպական բառարաններ։

Գիտական բառերու մասին առաջնակարգ թիւեք եղած է այս գործին վ. Հ. Գալֆաեան Հայ-էրաք ընդարձակ ընտիր բառագիրքն, իսկ բուսոց մասին վ. Հ. Ալիշանի Հայ-էրաքն, Աւելորդ չէ համարուած գիտելու նաեւ մասնաճեղքերու վրայ խօսող գրքերու օգնութեան։

Եղինակը խնամք եւրոպական ընտիր գործերէ քաղելով ամենէն գործնական և օգտակար գիտութիւններն զանոս խմբաւորած է մի հատորի մէջ՝ զարդարելով ամէն ճեղքի վերաբերեալ գեղեցիկ պատկերներով։

Սոյն գործը պիտի լրանայ 50 ութնութեան թիւերու մէջ, իւրաքանչիւր թիւթի երկայնութիւնն է 24 հարկերով ամբողջ, լայնք 16 հրմ. գրերն մանր և գիր-նը թեւեղի։

Իւրաքանչիւր թիւթի բաժանորդագինն է 20 սանթիմ, ամբողջ գիրքն 10 ֆրանք (—4 րուբլի, 2 տոլար) զոր կանխիկ ներփակելով տոմսակաւ պէտք է փափաքողն յէ առ Տեսչութիւն Վեհտիկի Միութարեան Տպագրատան. ապահովագրեալ նամակաւ եթէ կ'ուզէ ընդունիլ թերթերը։

Թերթերն կը ղրկուին հինգ հինգ իւրաքանչիւր անգամ. Իտալաստանի և Տաճկաստանի համար, յայտնի է թէ լուսաբոյն է յանձնարարականաւ (recom mandé) ղրկել. առ այս փափաքողն պէտք է 25 սանթիմ աւելի հաշուէ, որով բաժանորդագրոյն վրայ աւելցնէ ֆր. 2.50—(12.50 ֆր. —5 րբլ. —4 ու կես տոլար). վասն զի կորստեան պատասխանատու չէ Տեսչութիւնը։

Տպագրութիւնը տւարտելէ վերջ, բառգիրքին գինն պիտի բարձրանայ 15 ֆրանքի. բաց ի թղթատարի ծախսը։

* Վերագրեալ աղդի վրայ՝ Հանրագիտակի բոլոր Գործակալներու և Բաժանորդներու ուղարկութիւնը կը հրաւերենք, և կը յանձնարարենք վեր. Հ. Ս. Ե. Բաժանանի սոյն հմտայիր և արդիւնաշատ գործը, որ ոչ միայն ֆրանսագէտ հայերու, այլ մինչեւ իսկ ֆրանսերէն չգիտող ամէն Հայ գրագէտի, բանասերի և ընթերցողի համար կարեւոր է, և անոնց չափ և աւելի կրնան օգտուիլ այդ բառարանի ուղղութեան, բանի որ ամէն բառի առջեւ պիտի գտնան ընդարձակ բացատրութիւններ, լուսաբանուած խնամաւոր պատկերներով։

Ի. Խ.

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie

موسوعة العلوم

ԽՐԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՂՍՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 47

1899 ՓԵՏՐՈՒԱՐ 13

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԱՌԱՋԵՆՈՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ

ՓԻՆՈՎԱՌՓԻՆՆ

ՀԱՏՈՐ 20րդ

Աշխատասիրեաց

ՏԲԴ. ՄԱՆՈՒԷԼ Բ. Յ. ԻԹԻԻՃԵԱՆ

Պանծանօք կը հաչակենք թէ՛ մերիններէն շատեր Կ. Պոլսոյ այս գեղեցիկ ոստանին կարողագոյն բժիշկներէն կը համարուին. բայց նոյնքան իրաւամբ կրնա՞նք պարծենալ թէ անոնք իրենց շահը կը փնտռեն իրենց պաշտօնին խղճի մօտք կիրառման մէջ, թէ անոնց փառքն է գիտութեան ընդհանրացումը եւ թէ չեն վախճար իրենց ուսումը՝ չեն հասարակաց կրթութեան բաժին հանելու:

Այո՛, իրենց պաշտօնին ուղիւ հասկցողութեամբ բժիշկներէ՛ տանք իրենց գիտութիւնը ժողովուրդին մօտ կը բերեն, երբեմն զուարճալի ձեւի մը տակ՝ ինչպէս Տքթ. Քօլօեան, երբեմն լուրջ կերպով՝ ինչպէս Տքթ.

Փոփովիչ, երբեմն զուտ գիտական՝ ինչպէս Տքթ. Լ. Տիգրանեան, Տքթ. Փէշտիմաղեան եւ Բէտոն:

Ուրեմն ինչո՞ւ մեր հաւանութեանք քուէն հմտալից երկասիրութիւններու վերապահելով հանդերձ, Տքթ. Եօրներէ՛ ամանց ինքնուրուք Աստղապահութիւններուն, սնամէջ եւ փայտուռոյց ճամարտախօսութիւններն մօտեանիւ չընենք:

Ի՞նչ է անոնց պարունակութիւնը: «Մեր մամիկներուն օրէն մնացած հացի լոփային» բացատրութիւնը, որուն ծայրը անպատճառ պէտք է փակցուի Տքթ. Եօրներու յաւիտեանական յանկերգը. «առանց ժամանակ տնայնելու պէտք է բժիշկին դիմել»:

Մարդ կ'զգայ թէ այսօրինակ տաղեր գրելու կարող բժիշկ մը՝ ամօթի տարտամ մնացորդէ մը զոտւած, իր տանը թիւը, հիւանդ ընդունելու օրն ու ժամը նշանակելու քաշներ է, ապա թէ ոչ իր գձուճ տաղձարանութիւնը չ'նքով շնորհքով ծանուցում մը կը դառնար:

Հաւատա՞նք Տքթ. Եօրներուն, Եփիմէրօէին դարը անցած է այլեւ, Յովհաննէս բրժիշկ, Ամիր Տէօփէթ, Միսիթար Հերացի միայն իւրֆած հնարաւորին քով փարի ունին, եւ «Ջերմանց միսիթարութիւն»ը, «Անգիտաց

Անպէտ»ը իբրեւ անցեալ մոտենադրութեան մը յետին նմոյշն են արդեօք: Բայց ո՛ւր են նոր բժշկարաններն իրենց նըրութիւններով և բազմազգի մասնագիտութիւններով:

Բժշկարան մը կարգալը զմարդ բժշկի չընէ՛ր, ո՛չ ալ քանի մը դեղերու անուն գոց ընել դեղօրէից զօրութեան վրայ մեզ դա՛ւափար կուտայ: Մենք ալ գիտենք թէ հիմա երկրորդական կրթութիւն ստանալէ վերջ դեռ վեց եօթը տարի բժշկական համալրարան յաճախելու և երեք չորս տարի վարպետի ձեռքի սակ հիւանդանոցի մէջ ծառայելու է որ մա՛րդ բժշկի կարգ անցնի:

Մենք ալ գիտենք թէ հիմա բժշկութեան նախաշաւիղ գիտութիւնները՝ անդամազննութիւն, դեղօրէից գիտութիւն, ևչն, բուն բժշկութիւնը մենէ խիստ հեռուները կը տանին, թէ Ասկլէպիոսի տաճարին մուտքը այսօր աւելի դժուար է բռնաբարել քան Գալլանոսի ժամանակ:

Արդարացում մը չէ մէջ բերել թէ արտաքին բժշկութիւնն իր այլևայլ բաժանումներով և ներքին բժշկութիւնը իր սարօք տնհոյի կը մնան սովորական մահկանացուաց: Թէ հիմա մասնագիտութիւն դարձած են մանկաբարձութիւն, յիմարարութիւն, ակնաբուժութիւն, ջլատարութիւն, սկանջարութիւն, ծննդական անդամոց դարմանում, և այլն:

Եւ բացայայտ ճշմարտութիւն է թէ այլ և այլ բժշկական դրութիւններ ըստ տեղւոյն և պարագային, փորձ բժշկներու կողմէ ի գործ կը դրուին, և դատարկ խօքեր չեն ելեկարաբուժութիւն, հակաբուժութիւն, նըմանութիւն, մարմում, ևն:

Բայց ահա ճիշդ այդ նկատումներով կըսուասենք որ յարգոյ Տօթթէօրներ վերոյիշեալ գիտութեանց մէջ մեր ունեցած սովը կըտացնել փութան, և եթէ նախնեաց դըրքերուն չեն հաւնիր՝ իրենք հրատարակեն հաւնելիք գրքեր: Թող չառարկեն թէ գիրք կարգալը մարդ բժշկի չընէր, առանց գիրք կարգալու չէ որ իրենք բժշկի ելեր ևն:

Մեր Մատենադարանները թախուր են իսկապէս բժշկական արժանիք ունեցող գըրքերէ: Չունինք բժշկութեան նախաշաւիղ գիտութեանց գիրք. չունինք արտաքին բժշկութեան գիրք, չունինք ներքին բժշկութեան

գիրք, չունինք բժշկական մասնագիտութեանց գիրք, չունինք բժշկութեան այլ և այլ դրութիւններն աւանդող գիրք, չունինք բժշկական բառարան, արդ, բժշկները իրենց ո՛ր օրին կ'սպասեն, ինչո՞ւ չեն հեղինակեր, ինչո՞ւ գէթ օտար լեզուներէ չեն թարգմաներ:

Եւ թէպէտ՝ ինչպէս յիշեցինք՝ մէկ քանի իսկապէս գիտական գիրքեր ունինք, բայց յետ քննութեան կը հաստատուի որ անոնք կամ թերի են կամ ատենինն անցուցած եւ կամ հազարաւոր հատորներու կը կարօտին ստեղծութիւն մը կազմելու համար:

Ջոր օրինակ, Տթթ. Լ. Տիգրանեանի բառգիրքը պատուական գործ մըն է, բայց ազնիւ հեղինակը սխալ տոհմասիրութեամբ՝ արդէն կեցած բառերը կը խեղաթիւրէ որպէս զի օտարն հայացնէ այն ատիճան՝ մինչև հարկ կ'ըլլայ այս բժշկական բառարանին ալ բանալի բառարան մը չինել:

Մեր խոնարհ կարծեօք բժշկական բառերը՝ առաջին անգամ գործածուած լեզուով արձանագրելէ յետոյ, նախածանօթ բառէն հնութեան կարգու պէտք է պարսիկ, յոյն, լատին, արաբ հոմանիշներուն անցնիլ և սովա մեր լեզուն հասնիլ:

Դարձեալ Տթթ. Փէշտմալճեանի «Պատմութիւն մարդկային պատուաստին», թէև անչուչտ արժէքաւոր գործ մըն է, բայց բժշկութեան օժանդակ գրքերու կարգէն կը գտնուի և հազարաւոր լրացուցիչ մասնագիտական հատորներու սպասելով մեկուսացեալ կը մնայ:

Արհեստին մարդիկը թերեւ միաբանին մեր թուած լաւ գիրքերէն հատ մը ցոյց տալու և իբրեւ անգագական գործ յիշատակելու զՐէստէն որ իր ասենի ներքին բժշկութեան բովանդակութիւնն էր, բայց 1822էն ի վեր նոր գիւտեր եղած են և առանց բժշկի ըլլալու մենք անգամ կրնանք յիշել «Խօտ»ը, «անդիբիլի»ը, «Ֆէնապթիլ»ը ևչն. որ այդ գրքին մէջ կը պակսին:

Չը կարծուի թէ մենք Րէստէնը անարգող մըն ենք, և կ'ընդունինք որ մէթոսինք կերպով մեզ կ'աւանդէ ախտանունները, ախտերուն ինչ ըլլալը, անոնց բաժանումը, անոնց նշանները, անոնց պատճառները, անոնց տարբերութիւնները, անոնց գուշակու-

Թիւնը, անոնց դարմանը, անոնց կանխարգել միջոցները :

Գիտենք որ Ռէստէն գրաբար կրկին հատոր առաջին անգամ 1822ին և երկրորդ անգամ 1832ին Վենետիկ հրատարակուեցաւ և հեղինակը՝ ինքն իսկ իր խօսքէն դատելով, հարկ սեպեց ընդարձակ և աշխարհարար բժշկարան մը հրատարակել՝ որուն միայն վեց հատորները (1833—1839) Միջագիւղ Արտսկեան տպարանէն հրատարակուեցան և մնացեալ 8 հատորներուն ձեռագիրը ժառանգորդներուն քով կը մնայ, և չենք գիտեր թէ ինչո՞ւ զլացան Երուսաղիմայ Միաբանութեան յանձնել որպէս զի հրատարակուին :

Գալով արտաքին բժշկութեան՝ երկու տող գրութիւն անգամ չունինք և հիմա որ նոր գիւտերու, ապանեխանութեան, թմբեցուցիչներու, մանրացոյցի, Ռէստէնեան ձառագիւթի շնորհիւ արտաքին բժշկութիւնը բոլորովին յեղաշրջած՝ անակնկալ հրաշալիքներ կը կատարէ, սիրտի սպասենք որ Միութարեանները նոյն գոհողութեան ի գին ելլեն նոր նոր հատորներ հրատարակեն :

Պիտի չգտնուին ճշմարիտ փառասիրութիւն և անհեղձ բժիշկներ որ չահաւորութեան փրկուած քանի մը վայրկեան նոկիրեն զիրենք հարստացնող արհեստը գրի առնելու, ինչու որ այդ ալ իրենց պաշտօնին մէկ պահանջն է :

Բայց իրրև գեղազիր մրտուած կտոր մը թուղթի փոխարէն 100 կամ 200 զրո՝ գրույան են աւելի հեշտ է քան տարիներով ուղեղ մաշեցնել ոտուար հատոր մը 10 կամ 20 զրո՝ ի ծախելու հաւանականութեամբ, վկայ թող ըլլայ Տքթ. Փէշտմալճեանի Պատմ. Մարդ. Պատուաստին, որ 10 դահեկանի կը վաճառուի և գնորդ չի գտներ :

Այլ քա բժշկութիւնը, ինչ տարօրինակ կերպով բժիշկը փորձութեան մէջ ձգող արհեստ մըն է, չիտակը խօսելու չի գար, եթէ բժիշկը խոտովանի հիւանդին անբուժելի վնասը՝ դուռը դուրսէն կը գոցեն և Տօքթօրը առանց կուտի կը ճամբեն, բայց հիւանդին վրձակը որչափ անյուսալի ըլլայ, Տօքթօրը որչափ անհեթեթ խոտովաներ ընէ, այնչափ և աւելի կարմրուկ ոսկիներ իր ձեռքին մէջ կը լեցնեն :

Վասն զի, ըսէք, կ'աղաչեմ, որ հիւանդի տէր իր սիրելիին ծանրութեամբ ոսկի չի կռեր անոր կեանքը մահուանէ փրկելու

համար, եթէ մեռնի՝ բժիշկին պատասխանը գրպանն է. Աստուած չէ որ հոգի տայ. իսկ եթէ պատահմամբ ապրի, ամենէն թերահաւատն ալ Տօքթօրը մինչև եօթներորդ երկինք կը բարձրացնէ :

Ուստի որ բժիշկ չի փորձուիր գիրք հրատարակելը մատենագրին թողուլ և ինք ոսկեղէն հունձքին ետեւէն վազել. վասն որոյ երբ կը տեսնենք զՏքթ. Իւթիւճեան որ 1863էն սկսեալ 36 տարիներէ ի վեր անուր և օրինակելի յարատեւութեամբ կ'ուզէ մեր մէջ իր արհեստը ռաւակացնել, և եթէ ոչ գիտական գէթ ժողովրդական բժշկութիւն մը ստեղծել ի մեզ, մենք ալ կը ձայնակցինք Սրեկէի, Բագմովէպի, Բիւրակնի և մեր Հանրագիտակի համակրելի խմբագրութեան զՏքթ. Իւթիւճեան գնահատելու և իր գործը դրբուստելու :

(Շար.)

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՀԱՐՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՐԴ

Երբ բուրդը ոչխարին կռնակը եղած տեսն լուան, ինչպէս սովորաբար կ'ընեն շատ մը տեղեր, և եթէ այդ կալի ընածխաւը գոյութիւն ունենայ բուրդին վրայ, քիտի մէջ գտնուած կալի օճառներու հետ միանալով, օգտակարապէս կը նսլառուէ ալ տեղութիւնները անհերքեցելու մասին :

Բիրտը՝ գեղմէն քաղելով և չորցնելով, իր մէջ կը պարունակէ 60 առ 100 յօրինուածական նիւթեր (մաթիէռ օրկանիք), և 40 առ 100 հանքային նիւթեր : Բիրտի մոխրը կը բաղկանայ գլխաւորապէս կալի աղերէ, և մանաւանդ կալի ընածխաւը :

Մ. Մօմընէ և Ռօթըն բողբոջեցնելով հետեւեալ նիւթերը գտած են :

Կալիի բնած խառն	86,78 առ 100
Կալիանի քլորուկ (քլորիւր	
ուր բոթափոփ)	6,18 » »
Կալիի ծծմբատ	2,83 » »
Կայծքարատ և ֆոսֆատ կի-	
րի, մագնէզիտայի, բնակե-	
զի, երկաթի, մանկանէզի,	
սլիքնձի ևն.	4,21 » »
	100,00

Վերայիշեալ ցուցակէն յայտ յանդիման
կը տեսնուի որ, երկրագործներն երբ բուր-
դը սչխարին կունակը եղած ատեն լուան,
մեծ քտնակութեամբ կալի (բոթափոփ) կը կոր-
սնցունեն, որ կրնար իրենց համար կլորիկ
հասոյթի աղբիւր մըլլալ ամէն տարի, զէթ
խուզելու և լուալու համար բրած ծախքերը
գոցելու չափ:

ԽԱԿ ԲՈՒՐԴԻ ԼՈՒՍՑՈՒՄԷՆ ԳՈՅԱՅԱՄ
ՋՈՒՐԻ ՄԷՋ ԳՏՆՈՒԱՄ ՆԻԻԹԵՐԸ.— Ծախ-
ուած բուրդերու մեծ մասը՝ ընդհանրապէս
անկուայ կ'ըլլան. հետեւաբար և, աշաւարջ
վաճառական մը կրնայ առիթէն օգուտ
քաղել, բուրդերը լուալով, և լուացքի ջու-
րէն կալին գտակելով: Մեր գաւառացի ըն-
թերցողներուն կը թողունք այս եղանակով
իրենց հասոյթի նոր աղբիւր մ'ստեղծելու
խնդիրը, եթէ երբէք բուրդի վաճառակա-
նութեամբ զբաղողներ կը գտնուին իրենց
մէջ՝ որոնք՝ թէ վերայիշեալ չափը ի ձեռին
սլիաի ունենան, և թէ իրենց ծախած
բուրդը մաքուր ըլլալով, աւելի բարձր գի-
նով կրնան ծախել հրապարակին վրայ:

Բայց միեւնոյն ատեն չէ՞ մի որ երկրա-
գործներն ալ կրնան օգտուիլ վերայիշեալ
դրութենէն. քանի որ այդ նիւթերը իրենց
արտերու ծոցէն ելած, անվերաբաւնալի
կերպով կ'արտածուին, և այս կերպով տար-
ուէ տարի իրենց հողերու ուժը կը տկարա-
նայ. ահա գլխաւոր պատճառ մը՝ որմէ տե-
ղեկութիւն չունենալով, կը գտնուատին շա-
րունակ իրենց հողերու ամբողջութենէն: Արդ՝
եթէ գիտնան, և այդ նիւթերը կրկին ի-
րենց հողերուն վերաբարձնեն, սլիաի տես-
նէն թէ՛ այն ատեն որչափ տարբերութիւն
սլիաի ընէ հողերու տուրքը: Այս մտտին
արդէն մասնաւորապէս սլիաի գրեւք յար-
մար առիթով մը, և մեր նիւթէն չի չեղե-

լու համար, տեսնենք թէ ի՞նչ կերպով բուր-
դի քլորտէն կը գտակն կ'առնեն կալին և
ուրիշ կարեւոր նիւթեր:

Կարեւոր կը դատենք հոս յիշել թէ,
երբ 1860ին Մ. Մոմընէ և Ռոժըլէ իրենց
փորձերով և հետազոտութիւններով հաստա-
տեցին թէ բուրդի քլորտին մէջ մեծ քանա-
կութեամբ կալի կը գտնուի, Ֆրանսայի եւ
Պելճիգայի բուրդի ճարտարաբուհատական
կեդրոններու մէջ մէկ քանի կատիւոտ
փորձերէ յետոյ, վերջնականապէս համոզուե-
ցան, և լրջօրէն զբաղեցան այդ կարեւոր
խնդիրներով. այնպէս որ՝ կալիի տարեկան
արտադրութիւնը մէկ միլիոն քլորտիւր
կ'անցնի այժմ: Ուստի կ'արժէ որ՝ Թուրքիոյ
երկրագործները և բուրդի վաճառականներն
ալ լրջօրէն զբաղին այս խնդիրով, քանի որ
երկրին հասոյթներուն վրայ կարեւոր յաւե-
լում մ'ըլլալու հաւանականութիւնը կայ:

Ազտոտ բուրդը տաշտերու կամ տակառ-
ներու մէջ կը լուան հետեւեալ կերպով: Ե-
րեք կամ չորս տակառ իրարու քով դրուած
ըլլալով, բուրդերը կ'ընկղմեն նոսի առաջին
տակառին մէջ, ուժգնօրէն կը թնթեն, կը
սեղմեն, կը քամեն, կը լեցնեն երկրորդ
տակառին մէջ, ուր կը կատարեն միեւնոյն
գործողութիւնները, և անկէ կ'անցունեն եր-
րորդին, և վերջապէս չորրորդին մէջ: Այս
վերջինէն կը հանեն, լու մը կը քամեն, կը
կաթկթցնեն, կը չորցնեն:

Երբ առաջին տակառէն բուրդը երկրոր-
դին մէջ կը դնեն. անոր տեղ նորէն բուրդ
կը լեցնեն առաջինին մէջ. և այսպէս չլթա-
յաբար կը շարունակեն մինչեւ որ տրամադ-
րելի բուրդերը հատնին:

Տակառներուն մէջ լեցուած ջուրը 5—6
անգամ կարելի է գործածել. այսինքն՝ ա-
ռաջին տակառին մէջ երբ 5 կամ 6 ան-
գամ բուրդ մտնայ. այնուհետեւ անոր մէջի
ջուրը արտաքելու է. երկրորդ տակառը՝ ա-
ռաջին, երկրորդը՝ երկրորդ, և չորրորդը
երրորդ ընելով, առաջին տակառին մէջ ալ
նորէն պարզ ջուր լեցնելով չորրորդին տեղ
դնելու է. եւ այս կերպով շարունակելու է
մինչեւ վերջը: Եթէ բուրդը քիչ քիտ կը
պարունակէ, կարելի է մինչեւ 8—10—12
անգամ գործածել մէկ ջուրը:

Եւրոպայի մէջ մասնաւոր գործիքներ հնա-

րած են բուրդը լուսլու համար, որ աւելի չուտ, դիւրին և ծախքը քիչ կ'ըլլայ:

Վերոյիշեալ գործողութիւններէն վերջ, հետզհետէ արատաբար ազատ ջուրը կը չոգիացնեն կամ կրակի վրայ, կամ արեւուն: Երկու պարագային մէջ ալ կը գործածեն եղերքները ցած կոնքեր, որպէս զի ջուրը ընդարձակ մակերեւոյթ մ'ունենալով, չոգիացումը արագ կատարուի: Յատուկ միացած գիրտը կը հաւաքեն, և լուսաւորութեան կազի փունդերու մէջ (գօրնիւ ա կազ) կը տաքցնեն: Եւած կազը լուսաւորութեան կը գործածեն. և փունդերու մէջ մնացած խարկածուիւր (քօք) դուրս հանելով բաց օդին կը կիզեն ամբողջովին, ջրով կը լուան, եւ այս կերպով կ'առացուի, խակ կալիի բնածխատ՝ 100 քիլօ խակ բուրդէն 7էն 9 քիլօ, որ իւր մասին կը պարունակէ 85 առ հարիւր զուտ կալիի բնածխատ:

Վերոյիշեալ դրութիւնը, զոր կը գործածեն Եւրոպայի մէջ, կրկնակ տեսակէտով չահաւոր է: Նախ կազը կ'առնուի, և լուսաւորութեան կը գործածուի. երկրորդ՝ կալիի բնածխատը, որ բուն գործողութեան նպատակն է:

Մեր տեղացի երկրագործները կամ բուրդի վաճառականները եթէ ուզեն բուրդի քրտէն կալին հանել, իրենց համար հարկ չիկայ՝ անպատճառ կազի փունդեր գործածել, քանի որ արդէն դաւառներու մէջ չեն կրնար խկ դնալ. այլ կրնան պարզապէս չորցած դիրտը՝ երկաթածոյլ (տէմիր տէօքմէ) կաթսաներու մէջ կամ կիրի թրծոցներու (քիրէճ օճալը) նման թրծոցներու մէջ խարկելով. թէեւ՝ այս կերպով կարելոր մաս մը՝ լուսաւորութեան ծառայող կազը կը կորսնցունեն, որու գործածութեան մասին ալ արդէն պէտք եղած դիւրութիւնները չունին:

Համրէզ անուն քիմիագէտ մը առաջարկած է բուրդի քրտէն պատրաստել ուղղակի կերպով կալիի զեզին բրուսիադ (սաւրը բօթաւ), որ աւելի շահաւոր կ'ըլլայ թէեւ, բայց տակաւին գործնական հանգամանք մը տալով չէ գրութիւնը:

Անգլիոյ մէջ շատ մը գործարանատէրեր կալիի պատրաստութեան համար բուրդը նախապէս լուսլու գործողութիւնը վանց կ'առնեն. և անմիջապէս օճառվարի ազդեցու-

թեան կ'ենթարկեն: Այս գործողութիւնը որ իւզատել կ'ըսուի, յառաջիկային ընդարձակօրէն պիտի բացատրենք իր կարգին:

Վերջերս՝ բուրդի լուսլու ջուրէն նոր նիւթ մը եւս սկսան արատաբար, զոր կոչեցին բրդիւղիտ (լանօլին), որ էտալէս բուրդի մէկ պարարային մարմինն է: Իւր պատրաստութեան եղանակը պիտի բացատրենք նաեւ լուսաւոր գործողութեանց շարքին մէջ:

Ղ. ԲՈԼՍ

ՀԱՒԱԲՈՒԾԱԿԱՆ

ՀԱՆՈՑԸ

Ա

Գաւառներու մէջ, գրեթէ ամէն տուն ունի իր պարտէզին մէկ անկիւնը փոքրիկ շէնք մը յատկացուած հաւերու և հաւազգի թռչուններու պահպանման՝ որ կը կոչուի Հաւնոց:

Հաւնոց մը եթէ գիտակցօրէն կառավարուի և հաւերու սնուցման և առողջապահութեան մասնաւոր խնամքներ տալու, կրնայ տարեգլխուն կոկիկ, կըր գօւմար մը շահ յառաջ բերել ամենաշնչին ծախքով մը: Այս անգամ պիտի խօսինք հաւնոցին վրայ:

Հաւնոցը պէտք չէ որ խոնաւ ըլլայ, որովհետեւ խոնաւութիւնը ո՛չ միայն հաւերու առողջութեան կը վնասէ, այլ նաեւ անոնց արդիւնքները զգալի կերպով կը սահմանէ. նախ հաւերը ուշ կ'ածեն, կը մնան սկար, անկարող. երկրորդ՝ հաւկիթներու քանակութիւնը 1 առ 3 կը նուազի:

Հաւնոցին ճակատը պէտք է որ նայի դէպի արեւելք կամ դէպի հարաւ:

Ինչպէս ամէն կենդանիները նոյնպէս ալ հաւերը կը շնչեն, արդ. եթէ հաւ-

նոցը օդափոխութեան դիւրութիւն չունենայ, քիչ ժամանակէն հաւնոցին օդը կ'ապականի, այսինքն օդը թթուածինի տեղ պիտի պարունակէ բնածխական թթուաւ, որ մահացուցիչ կազ մ'է. ուրեմն հաւնոցը պարտի ունենալ մեծ ծակեր (պատուհաններ) որպէս զի օդը փոխուի:

Մեր տուները և ընտանի կենդանիներու ախոռները գոնէ չաբաթը մէկ անգամ կը մաքրենք. պէտք է նաև մասնաւոր զգուշութիւններ ընել և մաքրել հաւնոցները, որովհետև անմաքրութիւնը, դարչահատութիւնները, մէսաբոյրերը, ոչիւնները հաւերուն կը պատճառեն նեղութիւններ, անհանգստութիւններ և հիւանդութիւններ. այս հիւանդութիւններէն ոմանք քիչ ժամանակուան մէջ կրնան անթիւ հաւեր և հաւազգի թռչուններ մեռցնել:

Ձմեռ ժամանակ երբ հողածածկուած է ձիւնով, հաւերը ձիւնէն չեն հաւնոցեն դուրս թողուլէ քանի որ եթէ դիպուածով դուրսը մնան, ինքզինքնին կը կորսնցնեն, կը վախճան, կը դեգերին և այլ ևս չեն կրնար հաւնոց վերադառնալ:

Հաւերը գիշերը կ'անցընեն թառերու վրայ, որով հաւերու քանակութեան համեմատ թառերու թիւը պէտք է համեմատել՝ կռիւներու տեղի չտալու համար:

Լաւ հաւնոցի մը մէջ մասնաւոր թըխ սովայրեր կը գտնուին, որոնք կը բաղկանան փայտէ տուփէ մը կամ լոյն ոսկառէ մը, որուն յարակէ ծածկուած է յարգով: Մեր գաւառներու մէջ շատ տեղեր հաւերը կ'ածեն հողին վրայ, ինչ որ շատ մը թերութիւններ ունի:

Աղարակներու մէջ ձմեռ ժամանակ հաւերը ախոռներու տաքութիւնը կը փնտռեն և հոն կ'ածեն ինչպէս ամառը երբ ուրիշ հաւնոցի մը հաւերը չեն ածեր:

Ընտիր հաւնոց մը պարտի ունենալ իր առջև չորս կողմէն գոցուած բոկ մը,

ուր պիտի գտնուի քիչ մը աւազ, ջուր, կանաչեղէններ. այս վերջինները ամրան մէջ թէ՛ հաւերը կը զովագնեն և թէ՛ տաք օրերուն մէջ հաւերուն շուք կը հայթայթեն, նոյնպէս անոնց ախորժակն ալ կը բանան:

Միշտ կանաչեղէններ ունենալու համար, զոր օրինակ 12 հաւ պոռոնակող հաւնոցի մ'առջև 4—5 քառակա մէթր տեղ կրնանք փորել ու ցանել՝ կիրով խառնուած վարսակ, կիրը պիտի դիւրացնէ ճշումը (ժէրմինասիօն): Մինչև երկու շաբաթ պէտք է այս մշակուած տեղին վրայ ծառի ճիւղեր գնել որպէս զի հաւերը հողը չփորեն իրենց տաքերով և ցանուած հունտերը չուտեն: Նոյնպէս ցանուած օրէն մինչև երկու շաբաթ՝ առաւօտ և երեկոյ պէտք է ոռոգել որպէս զի աճումը դիւրանայ:

Այս 4—5 քառակուսի մեթր տարածութեան վրայ մշակուած կանաչեղէնը 12 հաւի համար շատ օրեր կը բաւեն և եթէ փոփոխակի երեք քառակուսիներ ունենաք, այնպէս որ մին նոր անկուած, միւսը նոր ծլած և միւսն ալ ուտելու ատիճանին հասած, ձեր հաւերն երբեք չպիտի նեղուին կանաչեղէնի մասին:

Ուրիշներ կրնան, եթէ ուզեն՝ մշակել կաղամբ, հազար և այլն:

Սիւնի
(Շրջանային)

Մ. Կ. ՄԱՆԱԲԵԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՕՐԵՐ

ՀԵՐԱՅԵՓՈԽԻԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆ

ԹԻԻ 71 ԵՒ 72 ՀԱՐՑԱՆՑ

Մանկապէն Պ. Գ. Ունեման կը հարցնէ բաղմարդիւն Հանրագիտակի միջոցաւ, թէ ի՞նչ է դարմանը հերաթա-

փութիւն (*) կոչուած մորթային հիւանդութեան :

Դարմանք մանրամասնելէ առաջ հիւանդութեան բնութեան վրայ մէկ երկու կարեւոր ծանօթութիւն, եթէ երբեք կընդունի յարկելի խնդրարկուն :

Հերթափութիւն, ազդեց ու զազրելի հիւանդութիւն, որ ընդհանրապէս իր բոյնը կը չինէ հոն՝ սւր բնութենէ օտառած է մազերով, սակայն և այնպէս ամենէն աւելի կ'ախորժի գլխուն մորթէն. հիւանդութիւնը նախ պարզ եղբով մը կ'սկսի, յետոյ մազերը կ'սկսին աղօտ, չոր, գունամերկ կերպարանք մը ստանալ. բարակնալ, արմատները ներդեւիլ, և ի վերջոյ թափիլ թէ լնքնին և թէ ամենաթափեալ քաշումով կամ հըստումով մը : Երբ մազերը թափին ճերմակ, ոգտրկ, երբեմն գունաթափ ու զոգացեալ, շատ անգամ բոլորածն ու դուն ուրեք ձուածն հարթակ (plaque) մը կը գոյանայ, որուն տարածութիւնը սակայն մը մեծութենէն մինչև հինգ ֆրանկնոցի ծաւալին չափ կըլլայ : Այս հերթազեպ հարթակին թիւը շատ անգամ մէկէ աւելի կ'ըլլայ. այդ առերևմէկ քանի դրացի հարթակներ միանալով հերթափ ընդարձակ մակերևոյթ մը կը ձևացնեն :

Դիտական տեսակէտով հերթափութիւնը միշտ միևնոյն ձևին տակ չի ներկայանար, այլ կարգ մը փոփոխութիւններ կը կրէ, որոնց կ'արժէ ուշադրութիւն դարձնել : Պարզ ձևին մէջ մազերու անկումը արագ կերպով տեղի կ'ունենայ այս պարագային մէջ կ'սր, ճերմակ հարթակներ կը գոյանան, մորթը կը գունատի, կը ներդեւի և կը գոգանայ. ասոր անդոյն հերթափութիւն (pelade achromateuse) կ'ըսուի, անուն զոր կուտայ մասնագէտն Պազէն : Երբեմն հար-

թակի վրայ անկանոն և ցանցառ կերպով աստ անդ մէկ քանի թել նուրբ, ամենակարճ, տեղւոյն և դիւրարեկ մազեր ցանցնուած կը նշմարուին, որոնք շատ գիւրաւ կը խլուին իրենց արմատներով մէկտեղ. այս տեսակն ալ կեղծակտուր հերթափութիւն (pelade plédo.tondante) կը յորջորջուի : Երբեմն ալ կարճ ժամանակամիջոցի մը մէջ ամենայն արագութեամբ մազերը կը թափին բաւական լայնածաւալ հարթակ մը յօրինելով, ու ճերմակ հարթ և փոստկերայ երևոյթ մը ձգելով. ասոր ալ կ'ըսուի մաշտեցողական հերթափութիւն (pelade décalvante :

Վերոյիշեալ հիւանդութիւնը տարիքի խորութիւն չունի, առ հասարակ ամեն հասակի մարդոց կը վիճակի, միայն թէ ամենէն աւելի յաճախ աղայոց և չափահասներու կը պատահի, քան կեանքի երկու հակառակ ծայրերը զբաղնողներուն. նաեւ աւելի ատենց քան թէ փափկասուն սեռին կը վիճակի : Դալով հիւանդութեան տեսողութեան, այս մասին ալ որոշ սահման մը գծել կարելի չէ. գրեթէ երկու երեք ամիսէն մինչև մէկ տարի և երբեմն քիչ մ'ալ աւելի կը տևէ պիտի ըսեմ :

Սոյն դարչելի ախտին պատճառադիտութեան մասին համոզումները, գաղափարները միահաղոյն չեն, այլ տարբեր : Ոմանք մակարութային բնութիւն ունեցող ախտ մը ըլլալը կը հռչակեն և, թէ մորթին և թէ մազին մէջ մակաբոյժին գոյութիւն ունեցած ըլլալը կը հաւատեն, ոմանք ալ ջղային ազդեցութեան տակ գոյացած հիւանդութիւն չ'ըլլալը կը պաշտպանեն. ոմանք ալ յիշեալ երկու գաղափարները միմեկոյն առան կը տածեն, և կ'ըսեն թէ հերթափ մասերուն մէջ տարբեր բնութիւններ ունեցող մորթախտեր պարփակուած են, որոնցմէ ոմանք տարափոխիկ են. հետեւաբար և շատ հաւանական է որ մակարութային ըլլան. ոմանք ալ զերծ

(*) «Սաչ գրքան» . առ ի չգոյէ հոմանիշ բառի, հերթափութիւն գործածել պարտաւորեցանք :

փոխանցիկ յատկութենէ՝ անտարակոյս ջղային ծնունդ մը ունին։ Ինչ որ ճշմարիտ է, սա է թէ հերաթափութեամբ վարակեալներու մազերը մակաբոյժով մը վնասուած մազի բնութիւնը չ'ունին, այլ ներգեւեալ վիճակ մը ու երեւոյթ մը ցոյց կուտան։ Ուրեմն դիւրին է հետեւցնել թէ հիւանդութիւնը ուղղակի մազին անդառնութեամբ վրայ կը ներգործէ թէ արիւնանօթային և թէ ջղային դրութեան միջոցաւ։ Սակայն և այնպէս հարկ է նաեւ խոստովանել թէ՛ յիշեալ ախտը կրնայ վարակեալէ մը ուրիշի փոխանցիկ, մինչև իսկ ընտանիքի մը ամբողջ անդամներուն։ Այդ փորձերը և գէպքերը կը հաստատեն թէ հերաթափութիւնը պէտք է երկու մասի բաժնել իր բնութեան տեսակէտով. առաջին, անփոխանցիկ տեսակը, որ ընդհանրապէս կը վիճակի զգայնատ անձերու, ջղային դրութեան վրայ ազդող ջղադրդիւ պատճառներով, զոր օրինակ չարաչար գործածութիւն, բարոյական ուժիւն յուզումներ, երկարատեւ վիշտեր ևն. երկրորդ, տարափոխիկ տեսակը, որ թէ՛ ուղղակի և թէ՛ անուղղակի միջոցաւ կը փոխանցէ, և անոր միջոցաւ է որ յաճախ փոխանցումը տեղի կունենայ, ընդհանրապէս արդուզարդի գործիներով, սանարեքով, վրձիններով ածելիով, վերջապէս այն ամէն կարասիներով, որոնք վարակեալ են, և գլխուն հետ շփման և հպման մէջ կը գտնուին։

Դարմանք. — Եթէ հերաթափ հարթակը մէկ հատ ըլլայ կը բաւէ միայն ստոր գտնուած տեղը շարաթը գտնէ երկու անգամ շուրջանակի ածիլել քիչ մ'ալ սահմանէն անդին անցնելով. իսկ եթէ մէկ քանի հատ ըլլայ ամենէն, լաւագոյն միջոցը գլուխը ամբողջովին ածիլելն է, (եթէ կ'ուզէք ածիլել վերջ գլխունուդ վրայ կեղծամ մը կ'անցունէք, անշուշտ դիմական ազդութենէ զերծ մնալու համար) սակայն դեղեցիկ

սեռին համար, անոնց երկայնաձիգ սակեթել մազերը զոհելէ առաջ, հարկ է բուժելու ջանքն ու փորձը ընել. իսկ երբ հիւանդութեան սուր ընթացքը կասեցնել անկարելի դառնայ, այդ առին հարկ անհրաժեշտ է ընդ փոթ մերկացնել զանոնք իրենց վարսերէն ի մեծ դժբաղդութիւն իրենց. գալով մանկանց, մինչև իսկ երբ մէկ հարթակ մը տեսնուի ստանց գլխուն վրայ, առանց վարանելու իսկոյն ածիլելու է։ Գլուխը հեղադրծ ընելու համար մազերը քաշելով արմատէն հանելու միջոցն ալ կայ, սակայն շատ ցաւ և տանջանք կը պատճառէ ենթակային, այսու հանդերձ աւելի օգտակար է այս կերպը. Ածիլելու գործողութենէն վերջ պէտք է գլուխը լուալ «կուսրանի», «իքթիօլի», «նափթօլի» օճառով, վերջապէս հականեխական մէկ օճառաջուրով, և յետոյ հետեւեալ դեղերէն մէկ հատով — որը որ ուզուի — գլուխը մարձել։ Միջանկեւարար ըսենք թէ այս հիւանդութեան դէմ գործածելի դեղերուն մէջ, ըստ դիտութեան նախամեծար կը համարուին անոնք որ ախտակիր մասերուն վրայ զրդուիչ ազդեցութիւն մը կ'ընեն։

Alcoolat de Fioravanti	100 gram.
Alcool camphré	100 „
Teinture de caatharides	20 „
„ de romarin	15 „

և կամ հետեւեալով

Alcoolat de lavande	125 gram.
Salol	0,30 centigr.

Գիշերներն ալ հետեւեալով

Baume de Pérou	1 gram.
Acide salicylique	1 „
Résorcine	1 „
Soufre précipité	10 „
Lanoline	15 „
Vaseline	15 „

Հետեւեալն ալ գործածելի է

Hydrate de chloral	5 gram.
Ether sulfurique	25 „
Acide acétique crist	2 „

Հետեւեալն ևս

Bichlorure d'hydrargyre	0,50 centigr.
-------------------------	---------------

Teinture de cantharides	25 gram.
Baume de Fioravanti	50 "
Eau de cologne	150 "

Երեկոյն ալ միւսնոյն կերպով մար-
ձել հետեւեալով

Acide salicylique	2 gram.
Naphtol B.	10 "
Acide acétique crist.	15 "
Huile de ricin	100 "

Երբ ախտը յօնքերու, մօրուքի և ըն-
չացքի մէջ հաստատուի վերատին, հարկ
է ամեն օր ածիլել և հականերսական
օժառաշուրով լուարէ վերջ՝ հետեւեալը
քսել ախտաժէտ մասերուն վրայ.

Teinture de cantharides	30 gram.
" de romarin	10 "

Եւ կամ հետեւեալը

Teinture de cantharides	25 "
" de benjoin	5 "

Վերջապէս այս կարգի դեղեր շատ
ու շատ են, անթուելի ըսուելու աստի-
ճան, զորս մի առ մի ներկայացնել ան-
տեղի ու ձանձրալի կ'ըլլայ շիտակը: Կը
յանձնարարենք նաեւ ուրիշ դեղ մ'ալ,
որ փորձուած ու յաջող արդիւնք մը
տուած է քանի քանի անձերու վրայ:
Ախտակիր հարթակները ածիլելէ և հա-
կաներսական օժառաշուրով լուարէ վերջ,
առաւօտերեկոյ Liqueur de wansvietenով
մարձեցէք և ապա Teinture d'iode քսեցէք:
Օգտակարութենէ զուրկ չ'է նաեւ օրը
մէկ քանի անգամ մորթը գրգռել կար-
ծրը խողանակով մը:

Այս դարմաններէն որը որ նախընտ-
րուի, հարկ է ի մօտ ունենալ թէ մոր-
թը գրգռելու է առանց չափազանցու-
թեան յանդելու. վասն զի երբ չափը
անցնի կրնայ ուրիշ ուէ վտանգի տեղի
տալ. այսինքն՝ թարախում մը և մոր-
թային այտումներ առաջ բերել: Ուշա-
դրութիւն՝ յօնքեր շինելու փափաքով
աչքեր հանելու դառնութեան մէջ չ'իյ-
նաք:

Այն պահուն, ուր ներկայ տողերու

վերջացնելու վրայ էի, անակնկալ զու-
գադիպութեամբ մը «Ժուռնալ տէ բը-
ռաթիսիէնի» վերջին թիւին մէջ յան-
կարծ առաջին ակնարկներու կը հան-
դիպի դիտական երկար յօդուած մը
հերթափութեան վրայ. թերթը ընդ-
դէմ հերթափութեան ասիո լաբիքի
մատուցած օգտակար ծառայութեան
վրայ մեծ գովեստով կը խօսի, որ փոր-
ձուած է «Սէն-Լուի» հիւանդանոցին մէջ
յիսուէնէ աւելի անձերու վրայ:

Այս առթիւ սոյն փորձերէն քաղե-
լով հետագայ խառնուրդը՝ գործածել
կը յանձնարարենք ջերմապէս.

Acide lactique	15 gram.
Eau distillée	30 "

Գործածութեան եղանակին գալով,
նախ ալքոլով և կամ էթէրով մորթը
մաքրելէ վերջ, պէտք է կտոր մը մա-
քուր բամպակ վերոնշանակեալ դեղով
թրջել և ապա ախտացեալ մասերը օրը
երկու անգամ մարձել մինչև որ մորթը
կարմրի՝ առաջին մարձումէ վերջ ցաւը
այնքան ուժգին չ'ըլլար, իսկ յաջորդա-
բար կատարուած մարձումներու պա-
հուն ցաւը կը կրկնապատկուի. այսու
հանդերձ հանդուրժելի է և քառօրդ
ժամուան մէջ կ'անհետանայ: Մորթը
քիչ ժամանակուան մէջ կը կարմրի, կը
գրգռի և կեղևներ կը ձևացնէ, երբ
գրգռումը քիչ մը զօրաւոր ըլլայ աւելի
պատշաճ է մէկ քանի օր գադըցնել
մարձումը և միայն vaseline boriquée
գործածել: Ասիո լաբիքի խառնուր-
դէն զատ պէտք է նաեւ հետեւեալ
ջուրով ամբողջ գլուխը լուալ օրը երկու
անգամ:

Sublimé corrosif	1 gram.
Eau distillée	2000 "

Երբ ասիո լաբիքը ջուրին տեղ
միւսնոյն քանակութեամբ ալքոլով միա-
խառնուած ըլլայ, նուազ կը գրգռէ
մորթը:

Հարկ է նաեւ ըսել թէ երբոր հիւան-

դուժինը ապաքինելու չաւղին մէջ մտնէ, մակերեսները կ'սկսին ծածկուիլ բարակ աղուամազով, զոր պէտք է ածիլել և չարունակել դարմանը բաւական ատեն ևս: Երբեմն այս նորաբոյս մազերը ճերմակ գոյն մը կը դրնան և քիտաւարդ անձերու վրայ, սակայն պէտք է տրտմիլ, քիչ ժամանակ վերջը բնական գոյնը կը յաջորդէ: Վերջապէս աղնիւ խնդրարկուն կը փութամ յայտնել թէ աւելի լաւ է բժշկի ձեռքով խնամուիլ, վասն զի երբ հիւանդը անարին աւշային և ջղային ըլլայ, հարկ է ներքնապէս մասնաւոր դարման տանիլ, ինչ որ շատ երկար եւ կնճռոտ խնդիր մը ըլլալուն համար անկարելի է երկու տողով հասկցնել:

Պ. Ունճեան անշուշտ կը բաւականայ այս չափով:

* * *

Նորէն միւսնոյն խնդրարկուն կը հարցընէ «չէ՞յլթան թըրնաղի»ին պատճառը և կը խնդրէ դարմանը:

Ասոր ալ պատասխանը յաջորդ անգամուն:

Շար.

ՄԱՏԱԹ

Ծ. ԽՄԲ. — Հանրագիտակի Յարգոյ յօդուածագրին մեր մասնաւոր շնորհակալութիւնը յայտնելէ վերջ, թէ և ոչ իբրորատի պոչտօնական գաւակ, մենք ևս մեր գիտցած ընտանեկան մէկ գեղը պիտի առաջարկենք, որ կը յուսանք կրնայ օգտակար ըլլալ երբ վարակումը իր թեթեւ վիճակին մէջ կը գտնուի:

Առէք մէկ տրամ բորակ (կիւվէրչիլէ), վրան քամեցէք լեւոնի մը հիւթը, լաւ մը խառնեցէք, մինչև որ հալի: Յետոյ այս խառնուրդով մարմնոյն հերաթափ մասերը մարձեցէք:

Այս գեղը շատ անգամներ յաջող արդիւնքներ յառաջ բերած է:

ԱՐՅԵՍՏԱԿԱՆ

ՆԻՔԵԼԱԶՕԾՈՒՄ

ՊԱՏԱՍԽԱՆ ԹԻԻ 77 ՀԱՐՑՄԱՆ

Երկաթէ և ուրիշ մետաղէ առարկաներու վրայ երեցած ճերմակ փայլունութիւնը կը տացուի նիքելազօծումով, որ արդիւնք է կալվանակերտութեան (կալվանիզ): Ելեքտրականութեան միջոցով, ինչպէս ոսկեզօծում, արծաթազօծում կ'ընեն, նոյնպէս ևս կրնան մետաղները նիքելի բարակ խաւով մը ծածկել:

Նիքելը կարծր մետաղ մ'է, բաց օդին չայլայլի, և երբ ելեքտրականութիւնով ուրիշ մետաղներու վրայ յարազօծուի, խիստ գեղեցիկ փայլ մը կ'աւանդէ. իր այս օգտակար յատկութիւններուն համար, գործածութիւնը շատ շուտ տարածուեցաւ. և այսօր շատ մը առարկաներու գեղեցիկ տեսք մը տալու համար, նիքելազօծում կը դիմեն: Մեքենաներու և մասնաւորապէս կարի մեքենաներու այլևայլ կտորները՝ ծորակներ, ժամացոյցի ծածկոյթներ, սեղանի սպասներ, ևն. ևն. այսօր մեծ մասամբ նիքելազօծուած են:

Ինչպէս ըսինք, նիքելազօծումը ելեկտրականութիւնով կ'ըլլայ. եթէ երբեք գաղափար չունիք, չէք կրնար յաջողցնել. կամ պէտք է մէկ քանի ամիսներ վարպետի մը քով վարձութիւն ընել, ելեքտրական բարդերու (բիլ) գործածութիւնը սովորելու համար, և կամ գոնէ քիչ շատ բնագիտական, քիմիագիտական ծանօթութիւններ ունենալու էք: Բայց սովորէտեւ հարցումը կարեւորութիւն ունի տեղական արհեստներու վարձացման տեսակէտով, և որու յոյժ նախանձախնդիր է Հանրագիտակ, յարմարագոյն առիթ կը սեպենք ելեկտրազօծումի դրութեանց վրայ, ըստ կարելոյն գործնական միջոցներ սովորեցնել մեր ընթերցողներուն, որոցմէ չհագրգռողներ կը գտնուին անշուշտ: Բայց նախ պատասխանենք ուղղակի ձեր հարցումին, և փորձենք քիչ շատ գոհացում տալ Ձեր փափաքին, ելեկտրազօծումը բացառութեամբ վերջ ուրիշ միջոց մ'ալ ցոյց տալով:

Մետաղէ սուարկաները երկու տեսակ կը նիքելազօծեն, իայլուն և անիայլ:

Փայլուն նիքելի խաւ մ'ստանալու համար, առարկաները նախապէս ողորկուած ըլլալու են: Հակառակ պարագային՝ նիքելազօծումը փայլուն չըլլար: Ուստի՝ ենթադրելով որ այս պայմանը գործադրուած է արդէն, և միայն անոնց վրայ նիքելի խաւ մը պիտի դրուի, պէտք է նախ մաքրել, և նիքելը ընդունելու տրամադիր ընել զանոնք, որու համար կը կիրարկեն հետեւեալ միջոցները:

1.—Մաքրողական լուգանք:

Տաք ջուր	1 լիթրա
Ծծմբական թթուութ	40 կուամ

2.—Կալիի լուգանք:

Տաք ջուր	1 լիթրա
Ամերիկեան կալի (բոթաս)	100 կուամ

3.—Ճերմկցնելու լուգանք:

Ջուր	1 լիթրա
Կալիումի ժահնուկ	50 կուամ

Այս լուգանքները առ հասարակ ամէն մետաղներու համար ալ կը յարմարին, ողորկուած սովորական ձուլածոյ երկաթի, պողպատի, կոածոյ երկաթի, արոյրի ևլն:

Բէրիլի հետեւեալ դրութիւնը աւելի ընտրելագոյն է, թէ և քիչ մ'աւելի մանուածապատ:

1.—Առարկաները խողանակել (Ֆըրչալամագ) քարիւղով, կամ կնդրիտով (պանզին), և կամ բեւեկնի իսկութիւնով, յետոյ չորցընել փայտի սղոցուկի (տէսթէրէ թալաշը) մէջ:

2.—Առարկաները 15 վարկեանի չափ վերը յիշուած կալիի լուգանքին ենթարկել, հանել և ջրով լուալ:

3.—Սողանակել՝ խողանակը կրաջուրի մէջ թաթխելով, յետոյ կրկին ջրով լուալ:

4.—Արագութեամբ վերը յիշուած ժահնուկի լուգանքին մէջ ընկղմել և հանել, եւ կամ հետագայ բազադրութեան մէջ:

Բէրիլի ձերմկցնելու լուգանքը

Ծծմբական թթուութ	1 լիթրա
Անկենդանական թթուութ (քէզապ) կէս	»
Կիզած ձանձախարիթ (այրած օճագ գուրումը)	կէս կուամ
Աղ՝ խոհանոցի	կէս »

Այս խառնուրդը՝ կիրարկելէ 6—7 ժամ առաջ պատրաստելու է, որ ատեն պէտք է չարունակ խառնել փայտով մը: Բայց արտաքին դած շոգիները չնչելէ զգուշանալու է, որոնք հեղձուցիչ (խզդող) յատկութիւն մը ունին:

Այս լուգանքը բաւական երկար ատեններ կրնայ գործածուիլ: միայն թէ ամէն օր մէջ մէկ քիչ կիզած ձանձախարիթ և աղ աւելցընելու է:

Անողորկ ձուլածոները պէտք է նախ ընկղմել մաքրողական լուգանքին մէջ: հանել, ջրով լուալ, չեչաքարով (բօմպա թաշը) յղկել, որու համար Եւրոպայի մէջ արագաշարժ առնիւ մը կը գործածեն յետանաքարերու դրութիւնով շինուած: այս գործողութենէն վերջ կրկին ջրով կը լուան, Բայց որպէս զի նիքելը ձուլածոյին յարագօղի, պէտք է այս վերջինը նախ պղնձազօծել՝ վերոյիշեալ գործողութիւնները լրանալէն յետոյ: և այս առթիւ կը գործածեն հետեւեալ լուգանքը:

Միմամբ պղնձի լուգանք

Թորեալ ջուր (իմպիկէ քաշուած)	1 լիթրա
Պղնձի ծծմբատ	10 կուամ
Ծծմբական թթուութ	15 »

Ուրիշ անողորկ մետաղներու համար՝ երկաթ կամ պողպատ, հետագայ եռացեալ լուգանքը կը գործածեն:

Մաքրողական լուգանք անողորկ մետաղներու համար:

Տաք ջուր	1 լիթրա
Ամերիկեան բոթաս	150—200 կուամ

որու մէջ ուժով կը խողանակեն, յետոյ մաքուր ջրով կը լուան, որ այլևս պատրաստ կ'ըլլան նիքելազօծումին: Բայց յարագօծումը հաստատուն ըլլալու համար աւելի աղէկ է նախ պղնձազօծել, որու համար կրնաք գործածել վերոյիշեալ պղնձազօծումի լուգանքը:

Ձինկը (չինկօ) նիքելազօծելու համար, պէտք է անպատճառ նախապէս պղնձազօծել հաստ խաւով մը, որու համար հարկ է անպատճառ ելեքտրական պղնձազօծումի դիմել: Բայց հիմա փոխանակ պղնձազօծումի կը կիրարկեն սնդկային (ճիվայով) դրուագում՝ սնդիկի աղի մը լուծաջուրին մէջ մէկ քանի վարկեան թողլով: Այս միջոցը որ գըտած է Մէյտէնճէր, պղնձազօծումէն աւելի

աղէկ արդիւնք յառաջ կը բերէ . պայմանաւոր նիքելագոծման նիքելի լողաջուրը կատարելապէս չեզոք ըլլայ :

Գերմանիոյ մէջ՝ զինկը նիքելագոծելու համար նաուման, Շուարձ և Վէյլի դրութիւնը կը կիրարկեն , որ հետեւեալն է .

1.—Ձէնկի թիթեղները կը մաքրեն կալի լուծաջուրի մէջ :

2.—Թաւալուն խողանակով (սիլիկոնի ձեւով շինուած արագաշարժ ֆըրչա) կը փայլեցնեն , խողանակը զաֆրանի ջուրով թերջելով :

3.—Թիթեղները կը իւզատեն (ալտերը լուրերը հանել) կնդրիտով (պանդին) շիւկով :

4.—Փայտի սրոցուկի մէջ կը չորցնեն :

5.—Սպիտակադեղով (լուծիւպէճ) կը խողանակեն :

6.—Մնդկով կը դրուագեն , ուրիշ վերջ կը նիքելագոծեն :

Նիքելագոծումի համար շատ մը տարազներ առաջարկուած են և կը գործածուին ըստ պարագային , որոնց գլխաւորներն են հետեւեալները .

1. Տարազ (Կէֆի)

Թորեալ ջուր	1 լիթրա
Նիքելի և անուշադրի կրկնակ ծեծմբատ (զտուած)	100 կրամ

Ջուրը կը տաքցնեն , նիքելի աղը կը հալեցնեն և սպիտակէն վերջը կը մզեն :

2.—Տարազ (Ռոզըլէօսի)

Թորեալ ջուր	1 լիթրա
Նիքելի և անուշադրի կրկնակ ծծմբատ	40 կրամ
Անուշադրի բնած խառ	30 կրամ

Ջուրը կը տաքցնեն , վերոյիշեալ երկու աղերը զատ զատ մէյմէկ քիչ ջուրի մէջ կը հալեցնեն , բնած խառի լուծուածքը կը լեցնեն ծծմբատի լուծուածքին մէջ , և կը յաւելուն վրան՝ մնացած տաք ջուրը ,

3.—Տարազ (Բֆանհաուզերի)

Ջտուած ջուր	1 լիթրա
Նիքելի ծծմբատ (*)	50 կրամ
Ջտուած անուշադրի մի քլորուկ (քլորիւր տ'ամոնիում բիւռ)	50 »

Կը պատրաստեն ճիշտ Չրդ տարազի նման

(*) Այս աղին տեղ կրնաք գործածել ճաւ քլորուկի կամ անկենդանատի նիքել (քլորիւռ աղ նիքել , աղօղատ աղ նիքել) :

4.—Տարազ (Վայսի)

Ջտուած ջուր	1 լիթրա
Նիքելի ծծմբատ	40 կրամ
Անուշադրի մի քլորուկ	20 »
Լեմանի թթու (աւիտ սիդրիք)	2 »

Բաղադրութիւնը ջուրով կ'եռացնեն , որ պէտք է չեզոք ըլլայ , այսինքն ոչ թթու եւ ոչ ալ ալքալի . ասիկա հասկնալու համար «բարիէ թուռնըսը» կոչուած թղթով կը փորձեն , եթէ թուղթը կարմրի՝ ըսել է հեղուկը թթու է , այն ատեն պէտք է աւելցնել քիչ մը անուշադր , (ամոնիաք—նիլաալըր բուհը) մինչև որ կապոյտ թուղթը իր գոյնը անաղարտ պահէ հեղուկին մէջ մնուած ատեն : Հեղուկին ալքալիւթիւնն ալ հասկնալու համար , կապուտ թուղթը առաջուց քիչ մը թթուութեամբ պարունակող ջուրի մէջ կը կարմրցնեն . գործարարի , գաւաթ մը ջուրի մէջ մէկ քանի կաթիլ ծծմբատի թթուութեամբ կը խառնեն , թուղթը մէջը կը մխեն , որ իսկոյն կը կարմրի , կը հանեն , կը չորցնեն և այնպէս կը գործածեն վերոյիշեալ նիքելի լողանքի ալքալիութիւնը հառկնալու համար :

Բովէլ փորձելով հաստատած է որ նիքելի աղի մը հետ եթէ քիչ մը կնդրիտական թթուութեամբ (աւիտ պանդօք) խառնուի , մասնաւոր իր լուծուածքը բացարձակապէս ալքալիայի լի ըլլայ , իսկապէս գեղեցիկ , արծաթափայլ սպիտակութեամբ , միատարած և ուժգնապէս յարազոծուած դրուագում մը կ'ստացուի : Ասիկէ զատ շնորհիւ այդ կնդրիտական թթուութեամբ , լուծուածքը խիստ երկար ատեն կրնայ պահուիլ , առանց այլայլելու : Փոխանակ կնդրիտական թթուութեամբ , կարելի է նաեւ իւր աղերէն մէկը գործածել որ միեւնոյն կերպով կը ներգործէ լուծուածքին վրայ , և առ այս կը գործածեն ընդհանրապէս նիքելի կնդրիտաղը (պանդօաղ տը նիքել) :

Այս առթիւ կը յանձնարարուին հետեւեալ տարազները .

Ա. տարազ

Ջտուած ջուր	1 լիթրա
Նիքելի ծծմբատ	25 կրամ
» լիմոնատ	20 »
Կնդրիտական թթուութեամբ	7 »

Բ. տարազ

Ձտուած ջուր	1	լիթրա
Նիքելի քլորուկ	28	կուամ
» լիմոնատ	25	»
» քաղախատ	25	»
» լուսածնատ	25	»
Կնդրիտական թթւում	12	»

Գ. տարազ

Ձտուած ջուր	1	լիթրա
Նիքելի ծծմբատ	37	կուամ
» լիմոնատ	37	»
» կնդրիտատ	12	»
Կնդրիտատական թթւում	8	»

Եւ որովհետեւ կնդրիտական թթւումը դժուարաւ կը հալի ջուրին մէջ, սէտք է նախ Նիքելի աղերը յարմար քանակով ջուրի մէջ տաքցնելով հալեցնել, և եռացման ժամանակ միայն աւելցնել կնդրիտական թթւումը, որ Նիքելի երու ներկայութեան տակ զիւրութեամբ և շուտով կը հալի:

Այս գիւտի մէկ գլխաւոր առաւելութիւնն ալ այն է որ, կնդրիտական թթւումի գործածութեամբ Նիքելի աղերուն քիմիապէս զտուած ըլլալին հարկ չի մնար: Հետեւաբար և, քացախատի, լիմոնատի, ծծմբատի, քլորուկի Նիքելները պատրաստելու համար ալ ապահովապէս կարելի է գործածել, հրապարակը ծախուած սովորական և տաճան տեսակները, և այս կերպով կ'ընտացուի սքանչելի և խիստ աժան Նիքելի լուգալորներ:

Վէսթմոն խորհուրդ կուտայ որ, եթէ բաղադրութեան մէջ ոսկեբորական թթւում գտնուի, այն ատեն Նիքելի յարազանութիւնը խիստ ուժով կ'ըլլայ, միևնոյն անգամ ալ Նիքելը խիստ կակուղ, դիւրաթեք և խիստ կռանելի կ'ըլլայ: Այս բաղադրութիւնը կը գործածեն առհասարակ երկաթի, արջի կամ զինկի թիթեղները Նիքելազոծելու համար, որոնք պատրաստուելէն վերջը կրկին կը գործածուին այլ և այլ գործիքներու միջոցով կարգ մը առարկաներ պատրաստելու համար:

Վէսթմոնի տարազը

Ձտուած ջուր	1	լիթրա
Նիքելի քլորուկ	50	կուամ
Ոսկեբորական թթւում	20	»

Շար.

Դ. ԲՈՒՍ

Մ Ե Կ Ն Ա Ր Ա Ն

Նիքելազոծման յօդուածի մէջ գործածուած գիտական բառերու



Մաքրողական լուգանք, Bain de nettoyage (պէն տը Նէթուայած), թէմիկէյիճի պանեո:

Սոճմբական թթւում, Acide sulfurique (սիտ սիւլֆիւրիք, դաճ եւաղը):

Կալի, Potasse, բոթաս:

Կալիոնի ժահուկ, Cyanurè de potassium (ոխանիւն տը բոթասիոմ):

Կնդրիտ, Benzine, պանդին:

Բեւեկնի էսկութիւն, Essence de térébenthine թիթեմէնթի բուհու:

Կրաջուր, Eau de chaux, քիթեճ սույը:

Անկենդանական թթւում, Acide azotique քէզապ:

Պղնձի ծծմբատ, Sulfate de cuivre, կէօղթաշը:

Կալիի լուծաջուր, Solution de potasse, բոթաս սույը:

Թորեալ ջուր, Eau distillée. Իմպիկէ քաշուած, զտուած ջուր:

Նիքելի և ամուշադրի կրկնակ ծծմբատ՝ զտուած, Sulfate double de nikel et d'ammoniaque purè սիւլֆատ տուսլը տը Նիքել է տ'ամոնիաք բիւն:

Մգել, filtrer, սիւզմէք:

Անուշադրի քանծխատ, Carbonate d'ammoniaque, քառպօնադ տ'ամոնիաք:

Նիքելի ծծմբատ, Sulfate de nikel, սիւլֆատ տը Նիքել:

Անուշադրիոնի քլորուկ, Chlorure d'ammonium քլորիւն տ'ամոնիում:

Լեմոնի թթւում, Acide citrique, լիմոն թուղը:

Կնդրիտական թթւում, Acide benzoïque, սիտ պանզօիք:

Նիքելի քացախատ, Acétate de nikel, Նիքել սիթէսի:

Նիքելի լուսածնատ, Phosphate de nikel ֆօսֆատ տը Նիքել:

Ոսկեբորական թթւում, Acide borique, սաիտ պօրիք:

ՆԱՍԱԿՆԵՐ ԵՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ԱՌ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՐՑՈՒՄ ԹԻԻ 78

Տէր Խմբագրապետ

«Հանրագիտակ»իդ 36 թուոյն մէջ մեծ ուրախութեամբ կարդացինք՝ բարեօրրա ազգայիններէն Ազն. Մ. Սմբատեան էֆ. ի նշուէրն, զոր ընելու ազնուութիւնն ունեցած է գիւղիս աղքատիկ երկսեռ վարժարանին։ «Այժմէն» (թէ և ոչ) թէ գիւղիս անհատաց և թէ վարժարանիս սանուց ու սանուհեաց կողմէն խորին շնորհակալութիւնն իւր յայտնենք Մ. Սմբատեան էֆ. ի, մաղթելով որ իւր օրինակելի ուսումնասիրութիւնը և առ անտէր դպրոցս ունեցած հոգատար ոգին միշտ վստ պահուի յինքն։»

Դարձեալ թէ, ներելի թող լինի մեզ իրր անարժան բաժանորդ՝ սա յետագայ հարցումն ընել՝ որ է շերամի թթեհեաց հիւանդութեան մը բուժումը, որու մասին տեղացիք ո՛ր և է միջոց գտած չեն։

ԳՈՒՐՈՒՏԱՆ

Գարնան երբ թթեհեաներն սկսին բացուիլ, այն ատեն հիւանդ ծառը ի մէջ այլոց աչքի կը դարնէ իւր դեղնորակ, ցամքած տերեւներով և վախ ու չոր ճիւղերով (չբմայ)։ այնպէս որ կարող դիտող մը կ'իմանայ ծառին աւրուած ըլլալը։ Եթէ ուզես նոյն միջոցին և կամ մի քանի օր յետոյ քչիկ մը մէկ կողմին վրայ ծռէ զայն, և ահա «փաթ»՝ արմատէն փրթելն ու գետին խնայը մէկ կ'ըլլայ։ Հողէն դուրս քաշուած արմատը ջուրէն ելածի պէս թոյց ու փոտած է ալիւրի պէս։ Երբ մութ-ժամանակ (հանելէդ քիչ վերջը) արմատին նայիս՝ ֆոսֆորի նման կը փայլի։ Այս հիւանդութիւնը քիչ բացառութեամբ տարածուած է գիւղիս և շրջակայից պարտէզները։ Ասոր միւս տեսակն ալ որ կ'ըսենք (թէ փէ գուրուտանը) բաւական աւերումներ կը գործէ։ Ի՞նչ միջոց գործադրելու է այս հիւանդութեան։

Խմբագրապետ էֆ. արդեօք դժացուցիչ պատասխան մը տալու բարեհաճութիւնն պիտի ընէ՞ք որ մենք ևս ի սրտէ երախտապարտութիւննիս՝ եթէ կ'ուզէք՝ այժմէն յայտնենք։ Տարակոյս չի կայ որ գիւղացիներու և այլոց ամենամեծ բարիք մը ըրած ըլլալու բարեբաղդութիւնը պիտի ունենաք։

Ընդունեցէք

անկեղծ յարգանացս հաւատովն

Մնամ

Ս. ՄՀԿ. վարժարանի պաշտօնէայ
ՄԻՆԱՍ Կ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. ԽՄԲ.—Թէ երուանդ էֆ. փախուցեանի, և թէ վերոյիշեալ յօդուածագիր փորձագրական էֆ. ի տուած տեղեկութիւնները լաւ մը ուսումնասիրելէ յետոյ, լուսոյ նշոյ մը կը ծագի մեր մտքին մէջ, և հիւանդութեան բնութեան վրայ այժմ որոշ գաղափար մը կազմելով (միջոց յարգոյ յօդուածագրերու տուած տեղեկութեանց վրայ յենալով), կը փութանք յայտարարել թէ, պիտի կրնանք իրենց ցոյց տալ միջոցներ, որոնց կիրարկումով պիտի յաջողին այդ վտանգաւոր հիւանդութիւնը անհետացնել։ պայմանաւ սակայն որ անգամ մը գոնէ հիւանդութեան վայրը անձնապէս երթալով, մեր քննութիւնները կատարենք՝ և ըստ այնմ մեր կարծիքը և դարմանումի եղանակները ծանուցանենք։ Երկրորդ՝ քանի որ խնդիրը այդ ատիճան կարեւորութիւն ունի, և ամէն կողմէ խումբագրութեանս ղեկում կ'ըլլուին, հարկ է որ այդ մասին շահագրգռողները թերթիս յառաջդիմութեան ի նպաստ մասնաւոր վճարում մ'ընեն, և երրորդ՝ թթատան ունեցողներ ալ բաժանորդ արձանագրուին թերթիս, և ասոնք բոլորն ալ իրենց օգտին համար։ Հիւանդութիւնը մենք այժմէն կը կոչենք Արմատամէս, կամ Արմատանէս, և կամ Արմատագոս։

ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

ԹՎՅԱՆ (ՍՕՍ—ՍԱՂՅԱ)

Ինչպէս խոհարար Մինաս, նոյնպէս մէկ քանի տիկիներ կը խնդրեն մեզմէ եւրոպա-

կան թացաններու պատրաստութեան վրայ դրել: Այս թացաններու տեսակները խիստ շատ են թէև, բայց մենք անոնց մէջէն ամենէն կարեւորները և ընտրելագոյնները պիտի դատենք, երկար ատեն մեր ընթերցողները թացաններով չզբաղեցնելու համար: Եւրոպական շատ մը կերակուրներ իրենց հըռ-չակաւոր համեղութիւնը կը պարտին մեծ մասամբ թացաններու: Եւ այս թացաններու գործածութիւնը այնչափ ընդհանրացած է որ, շատ մը սահմաններու պէս պատրաստ կը ծախեն: Իրաւ է թէ մեր տեղական խոհանոցն ալ իր համեղ կերակուրները ունի, ասիկա չենք ուրանար: Բայց մեծ մասամբ եւրոպականին ոչ նրբութիւնը և ոչ ալ դիւրամարտութիւնը ունին, թէև շատ անգամ ծախքը միևնոյնը կ'ըլլայ. տեսէք պղտիկ օրինակ մը. մեր շատ մը տուներու մէջ, կարոտը (քէրէվիզ) կը պատրաստուի հետեւեալ եղանակաւ. միսը կը ջարդեն, կարոտը լուալէն մաքրելէն վերջ, աղով կը ձմռեն. կրկին կը լուան, յետոյ աղազեղ, սոխ, ստեպղին եւն, աւելցնելով կ'եփեն. (ոմանք ալ կը խաշեն կարոտը). և կերած ատենին, հաւկիթը լիմենի հիւթին հետ փրփուրցնելով վրան կ'աւելցնեն, կամ կերակուրին ջուրէն առնելով, պնակի մը մէջ կը լեցնեն, ու մէկ երկու դգալ ալ իւր աւելցնելով կը խառնեն աղէկ մը, և սառնին մէջ կը լեցնեն: Բայց եթէ հետագայ յարմարն թացաններէն մին գործածել ուզեն. անշուշտ տաան անգամ աւելի համեղ պիտի ըլլայ իրենց կարոտը: Նոյն իսկ շոգամը, որ շատերու հաճելի չէ, կարգ մը թացաններ կան, որոնք այն աստիճան կը համովցնեն, որ ամենէն աւելի չի սիրողներն անգամ պիտի ուզեն մերթ ընդ մերթ իրենց սեղանին վրայ ունենալ:

Երկու տեսակ թացան կայ. ընդհանուր և մասնաւոր: Առաջին տեսակին կը վերաբերին, ուղանիակոն թացանը և ճերմակ կամ թաւշուն թացանը (սօս վրլութէ. կամ սօս պլան): Գալով մասնաւորներու, վերի երկու թացաններէն մէկով կը պատրաստուին. կամ աւելի ուրիշ կերպով ըսելու համար, ու է մասնաւոր թացանի մը բաղադրութեան մէջ մուտ կը գտնեն այդ երկու տեսակէն մին կամ միւսը, և բաղա-

դրութեան ալ հիմը կը կազմեն: Թացանը՝ ըլլայ իւղոտ կամ ցամաք. անուշ կամ կծու, այն ատեն միայն լաւ պատրաստուած կ'ըլլայ, երբ բաղադրութեան մէջ մտած այլ և այլ նիւթերու քանակը ճշգրտափ, որակը ընտիր, և խառնուածքը աղէկ ըլլայ:

ՍՊԱՆԻԱԿԱՆ ԹԱՑԱՆ (ՍՍՍ ԷՍԲԱՆԵՕԻ)

Տապակի մը մէջ դրէք 25 տրամ կարագ. հալեցուցէք, և 2—3 ապուրի դգալ ալիւր աւելցնելով՝ փայտէ դգալով մը բոհրեցէք. մինչեւ որ բաց կարծիք դնէ մ'ստանայ, վար առէք կրակէն. յետոյ քիչ մը մօի ջուր լեցուցէք. դրէք տապակը 1 ժամու չափ մաղմաղ կրակի վրայ. և երեսը ելած իւղը և փրփուրը առէք: Երբ թացանը ըստ բաւականի մաքրուած ըլլայ փրփուրէն և ճարպէն այն ատեն չափաւոր կրակի վրայ դնելով ջուրը քաշել տալու է. և փայտէ դգալով մը շարունակ խառնելով, մերթ ընդ մերթ թացանը ամբողջովին վեր առնելով կրկին տապակին մէջ ձգելու է, որպէս զի յատակը և եզերքները չի փակին. (կամ ինչպէս սովորաբար կ'ըսեն, տակը չառնէ):

Երբ թացանը ինքզինքը քաշէ առանց չորնալու սակայն, այն ատեն պարզուտէ անցուցէք ու է է գոգաւոր (չուգուր) պնակի մը մէջ, և խառնեցէք շարունակ. մինչև որ կիսով չափ պաղի: Այդ միջոցին մէկ քանի մանր կարագի կտորներ դրէք թացանին երեսը. որպէս զի պողեղէն վերջը երեսը չի կարծրանայ:

ՄԱՅՆՈՆԷՉԻ ԹԱՑԱՆ (ՍՍՍ ՄԱՅՆՈՆԷՉ)

Մէկ կամ երկու հաւկիթի դեղնուցը լիմենի մը հիւթին մէջ աղէկ մը զարկէք, աւելցուցէք աղ, պղպեղ, տաքիճենիկ, մըշ-

կընկողմ էին՝ կաթիլ կաթիլ ձէթ կաթեցուցէ՞ք հաւկիթին վրայ շարունակ զարնելով և երբեմն ալ քանի մը կաթիլ ու ժով քաջախճեցուցէ՞ք. այս կերպով թացանը քիչ ատենէն կը թանձրանայ: Ասիկա կը գործածուի ձուկի աղցաններու, հաւեղէններու և բանջարեղէններու համար: Մայիօնէզի պատրաստութեան ժամանակ, թանձրացումը քիչ մը դժուար ձեռք կը բերուի. դիւրաւ յաջողելու համար, պէտք է հաւկիթի ճերմկուցէն պղտիկ մաս մը հետը խառնել, և շարունակ մէկ կողմ դարձնել:

ԲՐԻՆՁԻ ԿԱՐԿԱՆԴԱԿ

Առէ՛ք 75 տրամ բրինձ մաքրեցէ՛ք և լուացէ՛ք, գաւաթ մը ջրով կրակին վրայ դրէ՛ք. ու եփեցէ՛ք մինչև որ կակուղնայ: Աւելցուցէ՛ք լիմոնի մը արտափեղեւը, քիչ մը աղ, 150 տրամ սերուց (ինչպէս ուրիշ առթիւ ալ ըսած ենք, տեղական սերը կաթով յարելով կրնաք գործածել) կամ 200 տրամ ալէկ կաթ, որ պէտք է քիչ քիչ լեցնել. պէտք եղածին չափ շաքար, կտոր մը թարմ կարագ, քիչ մը նարնջի ծաղկեջուր, կամ վանելիս, և 6—8 հաւկիթ, որոնց ճերմկուցը պէտք է առաջուց փրփուրացնել, փայտէ դգալով մը խառնեցէ՛ք այս ամենը խառու: Թաքմ կարագով ծեփեցէ՛ք կաղապարը (խայիպ) կամ ու և է յարմար աման մը, լեցուցէ՛ք մէջը հացի քեղըրթուք (չաբլիւս)* և աւելցուցէ՛ք պատրաստած բրինձնիդ: Ժամ մը կամայ փուռի մէջ եփեցէ՛ք, և հանելէդ վերջը անմիջապէս սպարեցէ՛ք:

ԲՐԻՆՁԻ ԿԼՈՐԻԿ

Վերոյիշեալ կերպով պատրաստեցէ՛ք բըրինձը, և պզտիկ կտորներու վերածեցէ՛ք, ու մանր գաւաղանիկներու ձեւը տուէ՛ք, առաջուց փրփուրացուած հաւկիթի մէջ թաթխեցէ՛ք, յետոյ հացի քեղըրթուքի մէջ գլտորցունելով՝ կրկին հաւկիթի մէջ թաթխեցէ՛ք, ու կարագ եղի մէջ տապկեցէ՛ք, և փռիւցած շաքար ցածեցէ՛ք վրան: Այս կըրիկը պէտք է տաք տաք հրամցունել:

* Հացի կեղեւը կը կարծրցին, կը փռիւցնեն բարակ մաղէ կ'անցնեն և այսպէս կը պահեն, որուն կ'ըսեն հացի քեղըրթուք:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԽՆԴԻՐ ԻԸ.

Ութն անգամ ութը 65 կընէ ? ուրիշ չի հասկցուի՝ $8 \times 8 = 65$?

Լուծումը կը պահանջուի երկրաչափական ձևերով, բացատրութիւնով մէկտեղ: Ղ. Բ.

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԻՍ ՉՄԻՒՈՆԻՈՅ ՄԷՋ

Պանտրմաի անգլ. փոխ-հիւպատոս հանրածանօթ Ադն. Մարեան Սարգիս էֆ. ի կըրտսեր որդի՝ Արմէն էֆ. Ս. Մարեան ամուսնացած է Իզմիրի մէջ յունկար ամուսնայ 24ին. Համեստ. Օր. Ա. յտադ. Գ. Մսերեանի հետ:

Հարսանեկան հանգէսը կատարուելէն վերջը. Տէր և Տիկին Ա. Մարեան Պանտրմա ուղեւորած են, Մարեան էֆ. ի բնակավայրը:

Արմէն էֆ. Ս. Մարեան, որ Պերպէրեան վարժարանի մէջ դաստիարակուած է, և այժմ վաճառականութեամբ կը զբաղի. մին է այն երիտասարդներէն, որ իր կրթութիւնով և զարգացումով պատիւ կը բերէ ազգին: Իսկ Համեստ. Ա. յտադ. Գ. Մսերեան որ դուստրն է Իզմիրի հանգուցեալ նշանաւոր գրագէտին՝ Գրիգոր էֆ. Մսերեանի. մեր հայ գրագիտուն հիններու դասակարգին մէջ շատ կարեւոր տեղ մը կը բռնէ իր գրչի հրապոյրով, և կը փայլի շատ անգամ Արեւել, Մամուր, Եջերուն մէջ: Լուս գլտէ իր մայրենի լեզուն, և անոր չափ ալ ֆրանսերէն. 4 տարի շարունակ Իզմիրի Հռիփսիմեան Կրթատէր Ընկերութեան Տնօրէն Խորհուրդի և Ընդհ. Ժողովին ատենադպիրը եղած է:

Հանրագիտակ իր շնորհաւորութիւնները կը նուիրէ նորապստակ ամուսնի, իրենց երկար անդորրեւ անտանդ կեանք բարեմաղթելով:

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



Թ Է Յ Ը

ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԸՆՏԻՐ ԵՂԱՆԱԿ ՄԸ

Ձինաստանցիք թէյը կը պատրաստեն նոյն ինքն խմուած գաւաթին մէջ, հետեւեալ կերպով. դոր կը յանձնարարենք մեր ընթերցողաց իր զիւրութեան և օգտակարութեան համար:

Գաւաթին մէջ կը դնեն նախապէս պտղունց մը թէյ, ետագած ջուրը վրան կը լցնեն, և իսկոյն գաւաթին տակի պնակը վրան կը ծածկեն. անշուշտ շաքարը դնելէ յետոյ. թէև Ձինացիք թէյը առանց շաքարի կը գործածեն: Թէյի ջեւաթումը պատրաստուած կ'ըլլայ. երբ տերեւները գաւաթին յատակը իջնան: Ձի մուռնաք բսելու թէ՛ Ձինացիք երբ այս կերպով կը պատրաստեն իրենց թէյը, առանց պնակը գաւաթին վրայէն վերցնելու, մէկ եղբրքէն կը խմեն, որպէս զի հոտը մէջը մնայ:

Կ. Եավրուեան և Յ. Իսագուլեան Տեարց վաճառատան մէջ ծախուած թէյերը Արգոյ հառարակութեան մասնաւոր ուշադրութեան կը յանձնենք, որոնք հրապարակը գտնուածներուն մէջ, իրենց տեսակի ազնուութեամբ և զինքնու աւժանութեամբ անմիջեղի եղած են: Կեղծերէն զգուշանալու համար, զիմեցէք ուղղակի Ընկերութեան Կեդրոնատեղին, Կ. Պոլիս, ձեւալ-Պէյ խանի տակ, 10 թիւ:

ՏԲԴ. Բ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԿՆԱԽՏԱԲՈՅԺ, ՄԱՍՆԱԳԻՏ
ՋՂԱՅԻՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Որ իր երկար փորձառութեամբ ծա-

նօթ է, մի քանի տարիէ ի վեր ուսումնասիրութիւններ կատարելէ զինի ի Բարիզ, դարձած է մայրաքաղաքս հաստատելով իր բնակութիւնը Բերս Մէքթէպ-Պայրամ-Փողոց թիւ 29. ուր ամէն օր կէս օրէ վերջ հիւանդ. կ'ընդունի: Մասնաւորապէս կ'դարմանէ կնոջական և ջղային ամէն հիւանդութիւններ: ԵՇ. նոյն ժամուն ձրի կը դարմանէ կարծուեալները: Ելեքարարութեամբ ամէն տեսակներովր մասնաւոր քննութիւն Ուէնթիէնեան մեքենայով:

ԱԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՍՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԵՏԻԼԵԱՆ, ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ, ամէն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիքներ. Անդղիական և Գաղղ. պատրաստ գեղեր, գօնեակներ, պինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը յարմար գնելով: Լ. Արսւանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամէն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար որոնց կը զրկեն դեղորայք, ամէնայն արագութեամբ, թարմ և մատչելի գնելով:

Շատեր այնպէս կը հաւատան թէ Պոլսոյ հրապարակին վրայ ձՇՄԱՐԻՏ և ԱՆԽԱՐԴԱՆ Մօռիւ ձկան իւղ չի գրտնրիր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թող դիմեն Լ. Արսւանեան և Ս. Էմիրզէ Տեարց Դեղորէից վաճառատունը, Ծընտղեան Խանի տակ թիւ 3 ուր պիտի գտնեն ուղղակի նորվէկիայէն բերել տրուած ամենաընտիր ձկան իւղի տեսակներ: Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ զիւրամատչելի գիններով:

ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ասա-բազար — ժտեհան էֆ. Սափրիչեան
Արաբկիր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզրում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բարարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճեանեան
Իզմիս — Արրահամ էֆ. Կ. Կտաճեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէչիչեան
Թրեպոլիս — Գալուստ էֆ. Գըլլճեան
Սինոպ. — Յ. էֆ. Պետրոսեան

Կիրասոն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
Մարաշ — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
Վարժապետեան
Մանչսթր. — Յակոբ էֆ. Բողատեան
Պանսքումա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքճեան
Կիլիպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանսա. — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆրոն-Գարա-Հիսար. — Արտաշէս էֆ. Հալսլեան

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'ստորագրէ մի
միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈԼԱՏ,
որով դիմել պէտք է, առանց բացառութեան,
թերթիս վերաբերեալ ամէն գործառնու-
թեանց համար։

در علیّه ده بجه قوسنده اسکی ضعیله ده
۱۹ نومرو لی دکانه «مجموعه علوم» غزیه سی
سر محرری (بولاد) افندی به

Ղ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ
«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Զապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպոլ

H. Polad Rédacteur en chef du journal

"HANRAKIDAK,"

19. Rue Eski-Zabtié Bahçesi-Kapou, 19

Stamboul

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ

ՎԱՅԵԼԶԱԶԱՐԻՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Խմբագրապետ Հանրագիտակ Հանդեսի

Թիւ 19 Էսկի-Զապթիյէ

Կ. Պոլիս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը,
հաճեցէք զիս բաժանորդ արձանագրել թեր-
թիդ վայելչադարդութեան բաժնին
և
.

Ստորագրութիւն

(Ընթերցիկ)

198

Բնակութեան տեղ
Հասցէ

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մագրի-Գիւղ, Պողոս էֆ. Ազնաւորեանի խանութը,
Գատը-Գիւղ, Լեւոն էֆ. Զպուքճեան Դեղարանը,
Բերա, Մեծ փողոց Գառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը։